



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԳ

ՈՐՈՇՈՒՄ

2012թ. փետրվարի 10-ի թիվ 3/1

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆԸ ԵՎ ԲՈՒՅՋԵՏԱՅԻՆ ՈՒ ԱՐՏԱԲՈՒՅՋԵՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ (ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ) ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՆԿԱՏԱՍԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԹԱՅԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասի գ) կետի պահանջով՝ ՀՀ վերահսկիչ պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

Հաստատել բյուջետային և արտաբյուջետային մուտքերի ապահովմանը և բյուջետային ու արտաբյուջետային միջոցների օգտագործմանն ուղղված ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկային ծառայության մասով տարածքային ստորաբաժանումների (ընտրանքային) գործառույթների նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ

Ի. ԶԱԽԱՐՅԱՆ



Հավելված

Հաստատվել է ՀՀ ՎՊԻ Խորհրդի

2012թ.փետրվարի 10-ի թիվ 3/1 որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Բյուջետային և արտաբյուջետային մուտքերի ապահովմանը և բյուջետային ու արտաբյուջետային միջոցների օգտագործմանն ուղղված ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկային ծառայության մասով տարածքային ստորաբաժանումների (ընտրանքային) գործառույթների նկատմամբ վերահսկողության արդյունքների մասին

Վերահսկողության հիմքը՝ ՀՀ վերահսկիչ պալատի 2011 թվականի գործունեության տարեկան ծրագրի 7-րդ կետը և ՀՀ վերահսկիչ պալատի Խորհրդի 2011թ. մայիսի 30-ի թիվ 18/1 որոշումը:

Վերահսկողության նպատակը՝ Բյուջետային և արտաբյուջետային մուտքերի ապահովմանը և բյուջետային ու արտաբյուջետային միջոցների օգտագործմանն ուղղված ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկային ծառայության մասով տարածքային ստորաբաժանումների (ընտրանքային) գործառույթների նկատմամբ համապատասխանության և արդյունավետության ուսումնասիրություն:

Վերահսկողության առարկան՝ Բյուջետային և արտաբյուջետային մուտքերի ապահովմանը և բյուջետային ու արտաբյուջետային միջոցների օգտագործմանն ուղղված ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկային ծառայության մասով տարածքային ստորաբաժանումների (ընտրանքային) գործառույթներ:

Վերահսկողության օբյեկտները՝ Բյուջետային և արտաբյուջետային մուտքերի ապահովմանը և բյուջետային ու արտաբյուջետային միջոցների օգտագործմանն ուղղված ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկային ծառայության մասով տարածքային ստորաբաժանումներ (ընտրանքային):

Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակահատվածը՝

2010թ.-ի հունվարի 1-ից մինչև ստուգման իրականացման ժամկետի ավարտը:

Վերահսկողության կատարման ժամկետը՝ 01.06.2011-30.12.2011թթ.:

Վերահսկողության մեթոդաբանությունը՝ Վերահսկողությունն իրականացվել է՝ դիտարկման, ստուգման և վերլուծության ձևերով, ինչպես նաև կիրառվել են արդյունավետության (կատարողական) և համապատասխանության տեսակները: Ապացույցների ստացման մեթոդներից կիրառվել են փաստաթղթային, գործառույթների, ընթացակարգերի ու գործընթացների ուսումնասիրությունը, ֆինանսական հաշվետվություններում պարունակվող ցուցանիշների համադրումը: Վերլուծության փուլում ամփոփվել է ստացված տեղեկատվությունը, գնահատվել է ձեռք բերված ապացույցների և փաստերի ազդեցությունը վերահսկվող օբյեկտի գործունեության արդյունավետության և պետական բյուջեի եկամուտների հավաքագրման վրա:

Վերահսկողության արդյունքները՝

Մյասնիկյանի հարկային տեսչություն

Մյասնիկյանի հարկային տեսչության (այսուհետ՝ տեսչություն) կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն 01.01.2010թ.-ի դրությամբ տեսչությունում հաշվառվել են 10253 տնտեսավարող սուբյեկտներ, այդ թվում գործող՝ 6050, որից հաշվարկ հաշվետվություններ են ներկայացրել 6008 տնտեսավարող սուբյեկտներ: 01.01.2011թ.-ի դրությամբ հաշվառվել են 11180 տնտեսավարող սուբյեկտներ, այդ թվում գործող 6445, որից հաշվարկ հաշվետվություններ են ներկայացրել՝ 6327 տնտեսավարող սուբյեկտներ:

2010թ.-ի պետական բյուջեի մուտքերի հավաքագրման տարեկան առաջադրանքը կազմել է 22,415,000.0 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 22,525,700.0 հազ. դրամ (100.1%): 2011թ.-ի 9 ամիսներին պետական բյուջեի մուտքերի հավաքագրման տարեկան առաջադրանքը կազմել է 17,930,000.0 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 14,070,000.0 հազ. դրամ (78.4%):

01.01.2010թ.-ի դրությամբ տեսչությունում հաշվառված հարկ վճարողների հարկային պարտավորությունները կազմել են 13,990,144.5 հազ. դրամ, տարվա ընթացքում դրանք նվազել են 2,996,531.6 հազ. դրամով (21.4%) և 01.01.2011թ.-ի դրությամբ կազմել են 10,993,612.9 հազ. դրամ: 01.10.2011թ.-ի դրությամբ հարկային պարտավորությունները կազմել են 12,149,743.1 հազ. դրամ կամ 2011թ.-ի տարեսկզբի նկատմամբ ավելացել են 1,156,130.2 հազ. դրամով (10.5%):

01.01.2010թ.-ի դրությամբ տեսչությունում հաշվառված հարկ վճարողների գերավճարները կազմել են 9,686,332.7 հազ. դրամ, տարվա ընթացքում գերավճարներն ավելացել են 874,598.6 հազ. դրամով (9.0%) և 01.01.2011թ.-ի դրությամբ կազմել են 10,560,931.3 հազ. դրամ:

01.10.2011թ.-ի դրությամբ գերավճարները կազմել են 11,414,807.0 հազ. դրամ կամ 2011թ.-ի տարեսկզբի նկատմամբ գերավճարներն ավելացել են 853,875.7 հազ. դրամով (8.1%):

2010թ.-ին տեսչությանը 204 տնտեսվարող սուբյեկտներ հաշվետվություններ չեն ներկայացրել, 2011թ. 9 ամիսների ընթացքում 690 տնտեսվարող սուբյեկտներ կամ 2010թ.-ի նույն ժամանակաշրջանի նկատմամբ 528-ով պակաս:

2010թ.-ին 50,000.0 հազ. դրամ և ավելի իրացման շրջանառություն ունեցող 114 կազմակերպություններից՝ (23-ը ԱԱՀ վճարող չհանդիսացող) իրացման շրջանառությունը 26,698,050.1 հազ. դրամ, 2009թ.-ից 2011թ.-ի դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում չեն ստուգվել 84-ը (իրացման շրջանառությունը՝ 22,565,703.1 հազ. դրամ):

Համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի ե) կետի, հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող որոշ սուբյեկտներ (բարեր) գիշերային ժամերին աշխատելու թույլտվություն ստանալու համար վճարել են տեղական տուրք, սակայն 2010թ.-ից մինչև 2011թ. նոյեմբեր ամիսը հաշվարկված հաստատագրված վճարների նկատմամբ չի կիրառվել «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 36 հոդվածի բ) կետով սահմանված գիշերային ժամերին գործելու համար նախատեսված լրացուցիչ 2 ուղղիչ գործակից: Այսպես՝

1. «Մերկանտե» ՍՊԸ-ի վճարման ենթակա հաստատագրված վճարը հաշվարկվել է 4,752.0 հազ. դրամ, 9,504.0 հազ. դրամի փոխարեն:
2. «Արթուր և Եկատերինա» ՍՊԸ-ի վճարման ենթակա հաստատագրված վճարը հաշվարկվել է 1,439.8 հազ. դրամ, 2,879.6 հազ. դրամի փոխարեն:
3. «Թոկարմա» ՍՊԸ-ի վճարման ենթակա հաստատագրված վճարը հաշվարկվել է 1,297.5 հազ. դրամ, 2,595.0 հազ. դրամի փոխարեն:
4. «Շավար» ՍՊԸ-ի վճարման ենթակա հաստատագրված վճարը հաշվարկվել է 1,438.5 հազ. դրամ, 2,877.0 հազ. դրամի փոխարեն:

Խախտվել է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ ԱԱՀ-ի մասին օրենք) 3-րդ հոդվածի ե) կետի պահանջը, համաձայն որի, այն կազմակերպությունները, որոնց 20% և ավելի բաժնեհավաք կապիտալի սեփականատերերը նաև այլ կազմակերպության 20% և ավելի բաժնեհավաք կապիտալի սեփականատեր են, պետք է հանդիսանան ԱԱՀ վճարողներ՝ անկախ իրացման ծավալից: *Արդյունքում 16 կազմակերպությունների 2010թ. 424,370.2 հազ. դրամ իրացման շրջանառությունը չի հանդիսացել ԱԱՀ-ի հարկման օբյեկտ:*

«Իմաստասեր մասնավոր վարժարան» ՍՊԸ կրթական հիմնարկի իրացման շրջանառությունը համաձայն ԱԱՀ-ի մասին օրենքի 15 հոդվածի 2-րդ կետի ազատված է ԱԱՀ-ից: Այս պարագայում ԱԱՀ-ի մասին օրենքի 26 հոդվածի 1-ին կետի համաձայն մատակարարների հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները հաշվանցման

ենթակա չեն: Կազմակերպությունը, խախտելով վերը նշված պահանջը, 2011թ. 2-րդ եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկով (ԱԱՀ-ի հաշվարկի 16 տող՝ ՀՀ տարածքում ձեռք բերված ապրանքներ և ծառայություններ), հաշվանցել է 4,718.8 հազ. դրամ, որը չի պակասեցվել հաշվարկի 16.2 տողում (հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարի ճշգրտման ընդհանուր գումար): Արդյունքում ավելի է հաշվանցվել 4,682.8 հազ. դրամ: Նույնը թույլ է տրվել նաև 3-րդ եռամսյակում՝ 8,019.3 հազ. դրամի չափով:

«Նոյան Տապան» ՍՊԸ-ի չկատարված հարկային պարտավորությունը 12.05.2010թ. դրությամբ կազմել է 28,702.9 հազ. դրամ, սակայն տեսչությունը դատարան հայցադիմում է ներկայացրել և առկա է վճիռ միայն 2,500.0 հազ. դրամի մասով:

«Ֆրուտիմեքս» ՍՊԸ-ն 2011թ. երրորդ եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկով իրացման շրջանառությունը ներկայացրել է 6,415.3 հազ. դրամ, այն դեպքում, երբ սեպտեմբեր ամսին իրացման շրջանառությունը համաձայն դուրս գրված հարկային հաշիվների կազմել է 29,166.6 հազ. դրամ, կամ շրջանառությունը 22,751.3 հազ. դրամով պակաս է ներկայացվել:

«Արֆին վարկային միություն» ՍՊԸ-ի 2011թ. հուլիս ամսվա ԱԱՀ-ի հաշվարկով իրացման շրջանառությունը կազմել է 15,989.1 հազ. դրամ, որը հաշվատվությունում ներկայացվել է որպես ԱԱՀ-ից ազատված շրջանառություն, այն դեպքում, երբ 2,976.1 հազ. դրամի իրացման շրջանառությունը ազատված չէ ԱԱՀ-ից:

«Բիդս Բլար» ՍՊԸ-ում 26.07.2011թ.-ի ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ ՊԵԿ) նախագահի թիվ 1201538 հանձնարարագրով նախատեսվել է կատարել ուսումնասիրություն (չափագրում): Ընկերության տնօրենի բացակայության պատճառով չափագրում չի իրականացվել: Համաձայն «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման» մասին ՀՀ օրենքով սահմանված՝ «Տնտեսվարող սուբյեկտների մոտ արտադրանքի արտադրության, օգտակար հանածոների արդյունահանման և իրացման, ապրանքների շրջանառության և ծառայությունների մատուցման ծավալների, ինչպես նաև իրացման փաստացի գների (սակագների) (այդ թվում միջին) չափագրման իրականացման կարգ»-ի (այսուհետ՝ կարգ) 4-րդ կետի՝ «Հրամանի կամ հանձնարարագրի երկու օրինակը չափագրումը փաստացի սկսելու օրը տրվում է տնտեսվարող սուբյեկտի ղեկավարին (կամ ի պաշտոնե նրան փոխարինելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին)», սակայն տեսչության կողմից չի ճշտվել տնտեսվարող սուբյեկտի ղեկավարին ի պաշտոնե փոխարինելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի առկայությունը: Հինք ընդունելով տեսչության պետի զեկուցագիրը՝ ՊԵԿ-ի նախագահի հրամանով վերը նշված հանձնարարագիրը չեղյալ է ճանաչվել:

Որոշ դեպքերում խախտվել է ՊԵԿ նախագահի 09.03.2010թ.-ի N 423-Ն «Չափագրման արդյունքների վերաբերյալ արձանագրության ձևը հաստատելու մասին» հրամանի պահանջները: Չափագրման արդյունքները հաստատված ձևում լրացվել են մասամբ: Այսպես՝

1. «Մոդեռն Պլաստ» ՍՊԸ-ում 25.03.2010թ. իրականացված չափագրման արդյունքների արձանագրությունում չի նշվել հսկիչ-դրամարկղային մեքենայի ֆիսկալային հիշողության հաշվառքի ցուցիչի տվյալները՝ չափագրման սկզբի և ավարտի դրությամբ:
2. «Էդմանս», «Լոռի» և «Անաիդա և Քրիստի» ՍՊԸ-ներում իրականացված հացի արտադրության և իրացման չափագրման արձանագրություններում լրացվել է միայն ապրանքի անվանումը և մնացորդը:

Վերը նշված կազմակերպություններում 2009-ից մինչև 2011թ. դեկտեմբեր ամիսը (ժամանակահատվածը համարվում է փաստաթղթերի վաղեմության ժամկետ) բյուջեի հետ փոխհարաբերությունների ստուգում (այսուհետ՝ ԲՍ) չի իրականացվել:

«Շին Էքսիմ» ՍՊԸ-ում 02.04.2010թ. կատարվել է ուսումնասիրություն (չափագրում): *Կազմակերպությունում չափագրումը կատարվել է մեկ օր:* Խախտվել է կարգի 5-րդ կետի պահանջը, այն է. *«Մեկ չափագրումը կարող է իրականացվել տնտեսվարող սուբյեկտի կողմից սահմանված երկուսից մինչև հինգ աշխատանքային օրերի ընթացքում»:*

Կազմակերպության կողմից 2010թ.-ի ապրիլ ամսվա համար ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկում (ԱԱՀ-ի 20% դրույքաչափով հարկվող գործարքներ) իրացման շրջանառությունը ցույց է տրվել 25,523.0 հազ. դրամ, իսկ «Դուրս գրված (գնորդներին տրված) և (կամ) մատակարարներից ստացված հարկային հաշիվների վերաբերյալ» նույն ժամանակահատվածի համար ներկայացված տեղեկանքով (թվով 7 հաշիվ-ապրանքագրերով) իրացման շրջանառությունը կազմել է 8,056.4 հազ. դրամ (հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառմամբ իրացման շրջանառություն նույն ամսում ցույց չի տրվել) կամ տեղեկանքով իրացման շրջանառությունը ցույց է տրվել 17,466.6 հազ. դրամով պակաս:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170.3 հոդվածի համաձայն «Հարկերը, պարտադիր սոցիալական ապահովության վճարումները սահմանված ժամկետներում չվճարելն առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկը», սակայն ընտրանքային կարգով ընտրված 14 հարկատուներից միայն 5-ի նկատմամբ է կիրառվել 170.3 հոդվածի պահանջը:

Տեսչության կողմից առանձին դեպքերում չի ապահովվել «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի ա) ենթակետի պահանջը, համաձայն որի, տեսչությունը՝ հարկերի, այլ պարտադիր վճարումների կամ վարչարարությունից ծագած տուգանքների գծով վճարումն ուշացնելու դեպքում պարտավորության հայտնաբերման պահին հաջորդող 6 ամսվա ընթացքում կազմակերպությանը սնանկ ճանաչելու պահանջով պետք է դիմեր դատարան:

Կենտրոնի հարկային տեսչություն

Կենտրոնի հարկային տեսչության կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն, 01.01.2011թ.-ի դրությամբ, տեսչությունում հաշվառվել են 9736 տնտեսվարող սուբյեկտներ, այդ թվում գործունեությունը դադարեցրած՝ 1378 : Հաշվարկ հաշվետվություններ են ներկայացրել 5222 տնտեսվարող սուբյեկտներ:

2011թ.-ի 9 ամիսների ընթացքում պետական բյուջեի մուտքերի հավաքագրման տարեկան առաջադրանքը կազմել է 28,832,000.0 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 25,737,045.4 հազ. դրամ (89.3%):

01.01.2011թ.-ի դրությամբ տեսչությունում հաշվառված հարկ վճարողների հարկային պարտավորությունները կազմել են 8,403,398.1 հազ. դրամ, 01.10.2011թ.-ի դրությամբ հարկային պարտավորությունները կազմել են 14,545,919.6 հազ. դրամ կամ 2011թ.-ի տարեսկզբի նկատմամբ հարկային պարտավորություններն ավելացել են 6,142,521.5 հազ. դրամով (73.1%), (այդ թվում՝ «Տապինո» ՍՊԸ՝ 3,302,872.9 հազ. դրամ, «Մանաուս» ՍՊԸ՝ 2,050,875.2 հազ. դրամ):

01.01.2011թ.-ի դրությամբ գերավճարները կազմել են 20,768,787.6 հազ. դրամ, 01.10.2011թ.-ի դրությամբ՝ 18,809,803.5 հազ. դրամ կամ 2011թ.-ի տարեսկզբի նկատմամբ նվազել են 1,958,984.1 հազ. դրամով (9.4%):

2010թ.-ին 50,000.0 հազ. դրամ և ավելի իրացման շրջանառություն ունեցող 489 կազմակերպություններից՝ (44-ը ԱԱՀ վճարող չհանդիսացող) իրացման շրջանառությունը 233,143,699.0 հազ. դրամ, 2009թ.-ից 2011թ.-ի ղեկավարներ ամիսն ընկած ժամանակահատվածում չեն ստուգվել 133-ը (իրացման շրջանառությունը՝ 32,099,665.0 հազ. դրամ):

Համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի ե) կետի, հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող որոշ սուբյեկտներ (բարեր) գիշերային ժամերին աշխատելու թույլտվություն ստանալու համար վճարել են տեղական տուրք, սակայն 2010թ.-ին հաշվարկված հաստատագրված վճարների նկատմամբ չի կիրառվել «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 36 հոդվածի բ) կետով սահմանված գիշերային ժամերին գործելու համար նախատեսված լրացուցիչ 2 ուղղիչ գործակից: Այսպես՝

1. «Հեյբերտ» ՍՊԸ-ի 2010թ. հաստատագրված վճարը հաշվարկվել է 1,495.5 հազ. դրամ, 2,991.0 հազ. դրամի փոխարեն:

2. «Կալիբրի Գ.Ա.Գ.» ՍՊԸ-ի 2010թ. հաստատագրված վճարը հաշվարկվել է 900.0 հազ. դրամ, 1,800.0 հազ. դրամի փոխարեն:

Խախտվել է ԱԱՀ-ի մասին օրենքի 3-րդ հոդվածի ե) կետի պահանջը, համաձայն որի, այն կազմակերպությունները, որոնց 20% և ավելի բաժնեհավաք կապիտալի սեփականատերերը նաև այլ կազմակերպության 20% և ավելի բաժնեհավաք կապիտալի սեփականատեր են, պետք է հանդիսանան ԱԱՀ վճարողներ անկախ իրացման ծավալից: *Արդյունքում 23 կազմակերպությունների 2010թ. 556,277.8 հազ. դրամ իրացման շրջանառությունը չի հանդիսացել ԱԱՀ-ի հարկման օբյեկտ:*

«Ունիկում-Արմենիա» ՍՊԸ-ում ՊԵԿ-ի նախագահի 17.03.2010թ. N1702740 հանձնարարագրով ուսումնասիրությունը (չափագրում) կատարվել է մեկ օր: Խախտվել է կարգի 5-րդ կետի պահանջը, այն է. «Մեկ չափագրումը կարող է իրականացվել տնտեսավարող սուբյեկտի կողմից սահմանված երկուսից մինչև հինգ աշխատանքային օրերի ընթացքում»:

Համաձայն հարկային պետական ծառայության պետի 04.07.2006թ.-ի N1-06/378-Ա հրամանի հավելված 1-ի III-րդ բաժնի 2-րդ կետի պահանջի՝ կամերալ ուսումնասիրության անցկացումը պարտադիր է, եթե տնտեսավարող սուբյեկտի կողմից երրորդ տարին անընդմեջ ներկայացվել է հարկային վնաս: Սակայն տեսչությունը երրորդ տարին անընդմեջ հարկային վնաս ունեցող թվով 9 կազմակերպությունների կողմից ներկայացված հաշվետվությունների, հաշվարկների, հայտարարագրերի և օրենսդրությամբ սահմանված տեղեկությունների կամերալ ուսումնասիրություն չի իրականացրել:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170.3 հոդվածի համաձայն «Հարկերը, պարտադիր սոցիալական ապահովության վճարումները ,սահմանված ժամկետներում չվճարելը առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկը», սակայն ընտրանքային կարգով ընտրված 17 հարկատուներից միայն 4-ի նկատմամբ է կիրառվել 170.3 հոդվածի պահանջը:

Տեսչության կողմից առանձին դեպքերում չի ապահովվել «Մնացկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի ա) ենթակետի պահանջը, համաձայն որի, տեսչությունը՝ հարկերի, այլ պարտադիր վճարումների կամ վարչարարությունից ծագած տուգանքների գծով վճարումն ուշացնելու դեպքում պարտավորության հայտնաբերման պահին հաջորդող 6 ամսվա ընթացքում կազմակերպությանը սնանկ ճանաչելու պահանջով պետք է դիմեր դատարան:

Հրագրանի տարածքային հարկային տեսչություն

Հրագրանի տարածքային հարկային տեսչության կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն 01.01.2010թ.-ի դրությամբ տեսչությունում հաշվառվել են 3847 տնտեսավարող սուբյեկտներ, որից գործող՝ 1253: 01.01.2011թ.-ի դրությամբ հաշվառվել են 4054

տնտեսավարող սուբյեկտներ, այդ թվում գործող՝ 1372, որից հաշվարկ հաշվետվություններ են ներկայացրել՝ 1218:

2010թ.-ի պետական բյուջեի մուտքերի հավաքագրման տարեկան առաջադրանքը կազմել է 3,120,600.0 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 2,802,800.0 հազ. դրամ (89.8%): 2011թ.-ի 9 ամիսներին պետական բյուջեի մուտքերի հավաքագրման տարեկան առաջադրանքը կազմել է 2,696,900.0 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 1,877,800.0 հազ. դրամ (69.6.%):

01.01.2010թ.-ի դրությամբ տեսչությունում հաշվառված հարկ վճարողների հարկային պարտավորությունները կազմել են 3,077,400.0 հազ. դրամ (այդ թվում «Հրազդան Մաշ» ԲԲԸ՝ 1,299,900.0 հազ. դրամ), տարվա ընթացքում նվազել են 524,600.0 հազ. դրամով (17.0%) և 01.01.2011թ.-ի դրությամբ՝ կազմել 2,552,800.0 հազ. դրամ: 01.10.2011թ.-ի դրությամբ հարկային պարտավորությունները կազմել են 2,879,100.0 հազ. դրամ (այդ թվում «Հրազդան Մաշ» ԲԲԸ՝ 1,322,900.0 հազ. դրամ, «Հանքավան հանքային ջրերի գործարան» ԲԲԸ՝ 233,600.0 հազ. դրամ) կամ 2011թ.-ի տարեսկզբի նկատմամբ հարկային պարտավորություններն ավելացել են 326,300.0 հազ. դրամով:

01.01.2010թ.-ի դրությամբ տեսչությունում հաշվառված հարկ վճարողների գերավճարները կազմել են 1,404,800.0 հազ. դրամ, տարվա ընթացքում դրանք ավելացել են 121,700.0 հազ. դրամով (8,7%) և 01.01.2011թ.-ի դրությամբ՝ կազմել 1,526,500.0 հազ. դրամ: 01.10.2011թ.-ի դրությամբ գերավճարները կազմել են 1,273,100.0 հազ. դրամ կամ 2011թ.-ի տարեսկզբի նկատմամբ նվազել են 253,400.0 հազ. դրամով (16,6%):

2010թ.-ին տեսչությանը հաշվետվություններ չեն ներկայացրել 20 տնտեսավարող սուբյեկտներ, 2011թ.-ի 9-ամսում՝ 18 տնտեսավարող սուբյեկտներ կամ 2010թ.-ի նույն ժամանակաշրջանի նկատմամբ 1-ով պակաս:

2010թ.-ին 10,000.0 հազ. դրամ և ավելի իրացման շրջանառություն ունեցող 204 կազմակերպություններից (111-ը ԱԱՀ վճարող չհանդիսացող) 143-ը 2009թ.-ից 2011թ.-ի նոյեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում չեն ստուգվել (իրացման շրջանառությունը՝ 3,500,010.2 հազ. դրամ):

«Լուսաբաց ճամբար առողջարան» ՍՊԸ-ի հիմնադիրը «Գործիքաշինական գործարան» ԲԲԸ-ն է (հաշվառված չէ Հրազդանի ՏՀՏ-ում): Համաձայն ԱԱՀ-ի մասին օրենքի 3-րդ հոդվածի դ) կետի կազմակերպությունը պետք է համարվեր ԱԱՀ վճարող անկախ իրացման ծավալից, սակայն կազմակերպության 2010թ. 56,580.2 հազ. դրամ իրացման շրջանառությունը ԱԱՀ-ով չի հարկվել:

«Եղեվնիներ» ՍՊԸ-ն իր գործունեության ընթացքում չի հանդիսացել ԱԱՀ վճարող, սակայն կազմակերպության 30% բաժնեհավաք կապիտալի սեփականատերը հանդիսացել է նաև «Բիրյու Գրուպ» և «Տրուբայրո Գրուպ» ՍՊԸ-ների (հաշվառված չեն Հրազդանի ՏՀՏ-ում)

20% և ավելի բաժնեհավաք կապիտալի սեփականատեր: Արդյունքում կամակերպության 2010թ. 10,062.0 հազ. դրամ և նախորդ տարիների իրացման շրջանառությունները ԱԱՀ-ով չեն հարկվել:

«Ավտոռադ» ՍՊԸ-ում համաձայն ՊԵԿ-ի նախագահի 19.04.2010թ.-ի N 1704690 հանձնարարագրի կատարվել է ուսումնասիրություն (չափագրում): Ուսումնասիրության (չափագրման) արձանագրությունում բացակայում է ուսումնասիրության սկիզբը, ավարտը, ուսումնասիրության ժամկետում փաստացի տեխնիկական զննություն անցած տրանսպորտային միջոցների անվանումը, քանակը, զինը, ըստ օրերի իրացման շրջանառությունը, տեխնիկական զննության կտրոնների հաշվառումը (ստացում, ծախս, մնացորդ), ինչպես նաև կիրառված բնապահպանական վճարների դրույքաչափերը, կամ արձանագրությունը կազմվել է ՊԵԿ-ի նախագահի 09.03.2010թ.-ի «Չափագրման արդյունքների վերաբերյալ արձանագրության ձևը հաստատելու մասին» N 423-Ն հրամանով հաստատված՝ չափագրման արդյունքների վերաբերյալ արձանագրության սահմանված ձևի պահանջներին ոչ համապատասխան:

Վերը նշված կազմակերպություններում 2009թ.-ից 2011թ. դեկտեմբեր ամիսը (ժամանակահատվածը համարվում է փաստաթղթերի վաղեմության ժամկետ) ԲՍ ստուգում չի իրականացվել:

«Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի կողմից 2010թ.-ին ՀՀ ներմուծված ապրանքների մաքսային արժեքը կազմել է 420,200.0 հազ. դրամ, իրացման շրջանառությունը՝ 459,100.0 հազ. դրամ: Կազմակերպության կողմից 2010թ.-ի ընթացքում ՀՀ պետական բյուջե է վճարվել (բոլոր հարկատեսակներով) ընդամենը 9,600.0 հազ. դրամ, որից 2,200.0 հազ. դրամը ՀՀ «Հարկերի մասին» օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված տուգանքն է: Ապրանքների իրացումը (համաձայն գործում առկա փաստաթղթերի) հիմնականում (2010թ. իրացման շրջանառության 69 %,) կատարվել է ք. Երևանում գտնվող մանրածախ առևտրի կետի միջոցով: Տեսչության կողմից իրականացված ուսումնասիրության (չափագրման) ժամանակահատվածում՝ (04.10.2011թ.-ից 10.10.2011թ.) մասնավորապես 04.10.2011թ. չափագրման տվյալներով կատարվել է ընդամենը մեկ գործարք: Իրացման շրջանառությունը կազմել է 5,400.0 հազ. դրամ: Մանրածախ առևտրի կետի միջոցով (ՀԴՄ-ի կիրառմամբ) նման մեծածավալ իրացման շրջանառության ռիսկայնությունը պայմանավորված է ոչ միայն իրացնող կազմակերպության կողմից հարկային հաշիվներ դուրս չգրելու հանգամանքով, այլ նաև ձեռք բերված ապրանքների իրացման (օգտագործման) գործընթացի նկատմամբ հսկողության իրականացման անհնարինության առումով: Վերը նշված ուսումնասիրությունը (չափագրումը) կատարվել է ՊԵԿ-ի նախագահի 09.03.2010թ. 423-Ն հրամանով հաստատված ձևում պահանջվող տվյալների թերի լրացմամբ, մասնավորապես, չեն նշվել ապրանքի անվանումները՝ ըստ հերթականության, դրանց բնութագիրը, տեսակը, միավորի զինը և այլն: Ուսումնասիրության արդյունավետության

ապահովման նպատակով կազմակերպությունում չափագրման աշխատանքները պետք է իրականացվեին միաժամանակ՝ ինչպես պահեստում, այնպես էլ մանրածախ առևտրի կետում:

Էյա Ղազարյան և Գոհարիկ Մարգարյան ԱԶ-ներում չափագման արդյունքների ուսումնասիրությունից պարզվել է, որ նույն ժամանակահատվածում իրականացված չափագրման և ՀՀ կառավարության 01.04.2002թ.-ի N 299 որոշմամբ նախատեսված ներկայացված հաշվետվությամբ մեկ կգ հացի միջին իրացման գները էականորեն (20 և ավելի տոկոս) շեղվել են:

<<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> ՀՀ օրենսգրքի 170.3 հոդվածի համաձայն «Հարկերը, պարտադիր սոցիալական ապահովության վճարումները սահմանված ժամկետներում չվճարելը առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկը», սակայն ընտրանքային կարգով ընտրված 22 հարկատուներից միայն 7-ի նկատմամբ է կիրառվել 170.3 հոդվածի պահանջը:

Տեսչության կողմից առանձին դեպքերում չի ապահովվել «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի ա) ենթակետի պահանջը, համաձայն որի, տեսչությունը՝ հարկերի, այլ պարտադիր վճարումների կամ վարչարարությունից ծագած տուգանքների գծով վճարումն ուշացնելու դեպքում պարտավորության հայտնաբերման պահին հաջորդող 6 ամսվա ընթացքում կազմակերպությանը սնանկ ճանաչելու պահանջով պետք է դիմեր դատարան:

Եզրակացություն

1. Տեսչություններում հսկողությունից դուրս է մնացել «Ավելացված արժեքի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի ե) և դ) կետերի պահանջների ապահովման գործընթացը: Հաշվառված 41 կազմակերպությունների (2-ը՝ Հրազդանի ՀՏ, 16-ը՝ Մյասնիկյանի ՀՏ, 23-ը Կենտրոնի ՀՏ) իրացման շրջանառությունները (միայն 2010թ.-ին՝ 1,047,290.2 հազ. դրամ) չեն համարվել ԱԱՀ-ի հարկման օբյեկտ, որի արդյունքում տեսչությունների կողմից եկամուտները հավաքագրվել են համապատասխան չափով պակաս:

2. Կենտրոնի և Մյասնիկյանի ՀՏ-ներում (համապատասխանաբար՝ 2 և 4) գրանցված գիշերային ժամերին գործող 6 հանրային սննդի (բարեր) գործունեություն իրականացնող կազմակերպությունների հաշվարկված հաստատագրված վճարների նկատմամբ չի կիրառվել «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 36 հոդվածի բ) կետով նախատեսված լրացուցիչ 2 գործակիցը, որի հետևանքով կազմակերպությունների հաստատագրված վճարները հաշվարկվել են կրկնակի անգամ պակաս:

3. Մյասնիկյանի ՀՏ-ում հաշվառված՝

- «Իմաստասեր մասնավոր վարժարան» ՍՊԸ-ն, խախտելով ԱԱՀ-ի մասին օրենքի 26 հոդվածի առաջին կետի պահանջը, 2011թ. հաշվանցել է հաշվանցման ոչ ենթակա 12,702.1 հազ. դրամ՝ ստեղծելով գերավճար:
- «Ֆրուտիմեքս» ՍՊԸ-ն 2011թ. 2-րդ եռամսյակի ԱԱՀ-ի հաշվետվությամբ իրացման շրջանառությունը ներկայացրել է 22,751.3 հազ. դրամով պակաս:
- «Արֆին վարկային միություն» ՍՊԸ-ի 2011թ. հուլիս ամսվա ԱԱՀ-ի հաշվարկով 15,989.1 հազ. դրամը ներկայացվել է որպես ԱԱՀ-ից ազատված շրջանառություն, այն դեպքում, երբ 2,976.1 հազ. դրամ շրջանառությունն ազատված չէ ԱԱՀ-ից:

4. Մյասնիկյանի ՀՏ-ում հաշվառված 4 և Հրազդանի ՏՀՏ-ում հաշվառված 2 կազմակերպություններում չափագրման արդյունքները լրացվել են մասամբ՝ ՊԵԿ նախագահի 09.03.2010թ.-ի N 423-Ն հրամանով հաստատված ձևի պահանջներին անհամապատասխան:

Կենտրոնի և Մյասնիկյան ՀՏ-ներում հաշվառված համապատասխանաբար «Ունիկում-Արմենիա» և «Շին Էքսիմ» ՍՊԸ-ներում իրականացված չափագրման ընթացքում խախտվել է «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգի 5-րդ կետի պահանջը՝ չափագրումը սահմանված երկուսից մինչև հինգ աշխատանքային օրերի փոխարեն իրականացվել է մեկ օր:

Նման չափագրման արդյունքները ստուգում իրականացնելիս չեն կարող հիմնավոր և էական լինել: Այս պարագայում չափագրման գործընթացը դառնում է ինքնանպատակ:

5. Կենտրոնի ՀՏ-ում խախտվել է ՀՀ հարկային պետական ծառայության պետի 04.07.2006թ.-ի N1-06/378-Ա հրամանի հավելված 1-ի III-րդ բաժնի 2-րդ կետի պահանջը՝ երրորդ տարին անընդմեջ հարկային վնաս ունեցող թվով ինը տնտեսվարող սուբյեկտների կողմից ներկայացված հաշվետվությունների, հաշվարկների, հայտարարագրերի և օրենսդրությամբ սահմանված տեղեկությունների կամերալ ուսումնասիրություններ չեն կատարվել:

6. Հարկերը, պարտադիր սոցիալական ապահովության վճարները ուշացրած 53 կազմակերպություններից 37-ի նկատմամբ տեսչությունների կողմից չի կիրառվել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 170.3 հոդվածով նախատեսված տուգանքը:

7. Տեսչությունների կողմից առանձին դեպքերում չի ապահովվել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի ա) ենթակետի պահանջը:

Առաջարկություններ

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին՝

1. ԱԱՀ-ի մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի դ) և ե) կետերի, ինչպես նաև «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 36 հոդվածի բ) կետի պահանջների կատարման նպատակով համագործակցել (տեղեկատվություն ստանալու նպատակով) ՀՀ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների հետ:
2. Հանձնարարել տարածքային ստորաբաժանումների ղեկավարներին՝
 - Ապահովել ՀՀ հարկային պետական ծառայության պետի 04.07.2006թ.-ի N1-06/378-Ա հրամանի հավելված 1-ի III-րդ բաժնի 2-րդ կետի պահանջի կատարումը,
 - Ուսումնասիրություններն (չափագրումները) իրականացնել «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման» մասին ՀՀ օրենքի համապատասխան կարգով սահմանված ժամկետներով, ինչպես նաև չափագրման արդյունքների արձանագրությունները կազմել ՊԵԿ նախագահի 09.03.2010թ.-ի N 423-Ն հրամանով հաստատված ձևի պահանջներին համապատասխան:
 - Հարկերը, պարտադիր սոցիալական ապահովության վճարումները սահմանված ժամկետում չվճարող հարկատուների նկատմամբ կիրառել «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենսգրքի 170.3 հոդվածի պահանջը:

«Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի գ) կետի համաձայն մեկամսյա ժամկետում Վերահսկիչ պալատին գրավոր տեղեկատվություն տրամադրել ընթացիկ հաշվետվությունում ամրագրված՝ հայտնաբերված խախտումները վերացնելու վերաբերյալ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7

Հեռ. 50 20 20, 59 46 01

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Դ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սարգսյան

ՀՀ վարչապետի 04.05.2008թ. «ՀՀ վերահսկիչ պալատի հաշվետվությունների քննարկման ընթացակարգի և ՀՀ վարչապետի 2005թ. հուլիսի 8-ի թիվ 507-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 225-Ա որոշման համապատասխան Ձեզ եմ ներկայացնում ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2012թ. փետրվարի 10-ի թիվ 3/1 որոշմամբ հաստատված «Բյուջետային և արտաբյուջետային մուտքերի ապահովմանը և բյուջետային ու արտաբյուջետային միջոցների օգտագործմանն ուղղված ՀՀ կատավարությանն առընթեր պետական եկամուտների աշխատակազմի հարկային ծառայության մասով տարածքային ստորաբաժանումների (ընտրանքային) գործառույթների նկատմամբ վերահսկողության արդյունքների վերաբերյալ» ընթացիկ հաշվետվությամբ Մյասնիկյանի, Կենտրոնի և Հրազդանի հարկային (տարածքային) տեսչություններում արձանագրված թերությունների և բացթողումների վերացման և հետագայում նման խախտումների բացառման նպատակով կատարված աշխատանքների արդյունքները: Այսպես՝

1. «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի «դ» և «ե» կետերի պահանջների կատարման ուղղությամբ նշված խախտման առնչությամբ ՀՀ վերահսկիչ պալատի հաշվետվությունում արձանագրված 41 հարկ վճարողներից 13-ը ներկայացրել են ճշգրտված հաշվարկներ և վճարել են առաջացած հարկերը, 11

կազմակերպությունների մոտ կատարվել է պետությանը պատճառված վնասի նախնական հաշվարկ և նյութերը ուղարկվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչություն՝ հետագա ընթացքը ապահովելու նպատակով, 2-ի մոտ 2012 թվականին կանցկացվի բյուջեյի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգում, մեկ կազմակերպություն ներկայացրել է հիմնադրի փոփոխման հետ կապված փաստաթղթեր, իսկ մնացած 14-ը պարտավորվել են ներկայացնել ճշգրտված հաշվարկներ.

2. Կենտրոնի և Մյասնիկյանի հարկային տեսչություններում գրանցված գիշերային ժամերին գործող հանրային սննդի (բարեր) գործունեություն իրականացնող 6 կազմակերպությունների մոտ կատարվել է լրացուցիչ ստուգումներ, որի արդյունքում պարզվել է, որ այդ կազմակերպությունները ժամը 24:00-ից հետո չեն աշխատում: Շարունակվում են իրականացվել հսկողական աշխատանքներ նման երևույթների բացահայտման և վերացման ուղղությամբ.

3. «Իմաստասեր մասնավոր վարժարան» ՍՊ ընկերությունը Ավան թաղամասի Աճառյան 38 հասցեում իրականացնում է վարժարանի մասնաշենքի շինարարություն, որի հետ կապված իրականացնում է մատակարարների հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարի հաշվանցում: Համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ պարբերության, երե հետագայում պարզվի գործունեության նպատակը, ապա հաշվետու ժամանակաշրջանում իրականացված գործարքներին ուղղակիորեն վերաբերող ձեռքբերումների մասով նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում հաշվանցված ավելացված արժեքի հարկի գումարները ենթակա են վերաձևակերպման և պետք է միացվեն ապրանքների կամ ծառայությունների ձեռքբերման գնին: Ընկերությունը ներառված է 2012 թվականին ստուգման ենթակա կազմակերպությունների ծրագրում.

4. «Ֆրոտիմպեքս» և «Արֆին վարկային միություն» ընկերություններում հաշվետվությունում նշված հարցի վերաբերյալ կազմվել է կամերալ ուսումնասիրության արձանագրություններ: Արձանագրությունների հիման վրա ընկերությունները ներկայացրել են բացատրություններ, համաձայն որի հարկային հաշիվների լրացման ժամանակ թույլ են տրվել վրիպակներ, որոնք ուղղվել են և դրանց հիման վրա ներկայացվել է ճշգրտված ավելացված արժեքի հարկի հաշվարկներ.

5. «Նոյան տապան» ընկերությունից 24218.5 հազ. դրամ գումար բռնագանձելու պահանջով 30.11.2011թ. կրկին հայց է ներկայացվել ՀՀ վարչական դատարան.

6. Չափագրման աշխատանքներում տեղ գտած թերությունները վերացնելու նպատակով մեկ անգամ ևս հանձնարարվել է խստագույնս ղեկավարվել «Հայաստանի հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով, ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 09.03.2010թ-ի «Չափագրման արդյունքների վերաբերյալ արձանագրության ձևը հաստատելու մասին» թիվ 423-Ն հրամանի պահանջներով: Միաժամանակ հանձնարարվել է հատուկ ուշադրություն դարձնել հարկային վնաս հայտարարագրած հարկ վճարողների նկատմամբ համապատասխան հսկողական աշխատանքների իրականացմանը, հետևողական մոտեցում ցուցաբերել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 170.3 հոդվածի պահանջների կատարմանը: Հաշվետվությունում նշված այս և մնացած խախտումներում և բաց թողումներում մեղավոր անձանց հայտնաբերելու և կարգապահական պատասխանատվության ենթարկելու առումով նշված հարկային (տարածքային) տեսչություններում նախապատրաստվում է իրականացնել ծառայողական քննություն:

Գ. Գրիգորյան Գ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Տեղեկատվություն
ՀՀ վերահսկիչ պալատի կողմից իրականացրած վերահսկողության արդյունքների վերաբերյալ ձեռնարկված միջոցառումների կատարման մասին

Հարկային մաս

1. - ՀՏ պետի 02.02.2012թ թիվ 9 հրամանով հաստատված ցանկում ընդգրկված 5000.0 հազ.դրամ և ավել գերավճար ունեցող հարկ վճարողների մոտ իրականացվել է կամերալ / գրասենյակային/ ուսումնասիրություններ:
2. - Առ 10.01.2011թ դրությամբ տեսչությունում արձանագրված հարկային պարտավորությունների աճը շահութահարկի գծով պայմանավորված է «Երևանի ջրմուղ կոյուղի» ՓԲԸ թիվ 1012307 ԲՄ ակտով:
3. - «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի «բ» կետով սահմանված գիշերային ժամերին աշխատող բարերի համար լրացուցիչ 2.0 գործակցի կիրառման հետ կապված անհրաժեշտ է հիմնավորել «բար» հասկացությունը, որը ներառում է անմիջական տեղում սպառման համար պատրաստի արտադրանքի վաճառքը, որը սննդային և ջերմային մշակման չի ենթարկվում /սահմանված է դասակարգիչներով/: Վերը նշված հարցի կապակցությամբ միաժամանակ առկա է 26.10.2009թ վճիռը կապված թիվ ՎԴ/4577/05/08 վարչական գործի հետ:
4. «Մերկանտե» ՍՊԸ /ՀՎՀՀ 03530145/ Իսահակյան 28 հասցեում 2007թ նոյեմբերից իրականացնում է հանրային սննդի կազմակերպման գործունեություն սրճարանի միջոցով: Ընկերության կողմից հարկային տեսչություն ներկայացված ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների մասին հայտարարություններում լրացուցիչ 2/երկու/ ուղղիչ գործակից չի կիրառվել, քանի որ տնտեսվարող սուբյեկտի հանրային սննդի տիպը սրճարան է և 24:00-ից հետո չի աշխատում:
5. «Թոկարմա» ՍՊԸ Պուշկինի 56ա հասցեում իրականացնում է հանրային սննդի գործունեություն, օբյեկտի տեսակը՝ բար-սրճարան, և քանի որ ժ. 24:00-ից հետո գործունեություն չի իրականացնում, ընկերությունը հարկային տեսչություն ներկայացրած ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների մասին հայտարարությունում լրացուցիչ 2.0 ուղղիչ գործակից չի կիրառել: Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 25.03.2011թ թիվ 1308904 հանձնարարագրի «Թոկարմա» ՍՊԸ-ում իրականացված ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների ստուգմամբ պարզվել է, որ ընկերությունը պատկանող հանրային սննդի օբյեկտը ժ 24:00-ից հետո գործունեություն չի իրականացնում:
6. «Արթուր և Եկատերինա» ՍՊԸ Տերյան 72 հասցեում 2005թ հոկտեմբերից իրականացրել է հանրային սննդի կազմակերպման գործունեություն բարի միջոցով: Ընկերությունը հարկային տեսչություն ներկայացրած ելակետային

տվյալների և ուղղիչ գործակիցների մասին հայտարարությունում լրացուցիչ 2/երկու/ ուղղիչ գործակից չի կիրառել, քանի որ բարը 24:00-ից հետո չի աշխատել: Մյասնիկյանի ՀՏ պետի 10.08.2011թ թիվ 2106012 հանձնարարագրի համաձայն <<Արթուր և Եկատերինա>> ՄՊԸ-ում իրականացված ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների ու վարձու աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության ստուգմամբ պարզվել է, որ ընկերությանը պատկանող հանրային սննդի օբյեկտը 24:00-ից հետո գործունեություն չի իրականացնում: <<Արթուր և Եկատերինա>> ՄՊԸ 27.09.2011թ դադարեցրել է գործունեությունը: Արձանագրվել է հաստատագրված վճար 220800 դրամ և սոց.վճար 60000 դրամ:

7. <<Շավալ>> ՄՊԸ Նալբանդյան 29 բն.19 հասցեում իրականացնում է հանրային սննդի գործունեություն, օբյեկտի տեսակը` բար սրճարան: Համաձայն Կենտրոնի ՀՏ պետի 15.02.2012թ թիվ 2110848 հանձնարարագրի <<Շավալ>> ՄՊԸ իրականացված ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների ստուգմամբ արձանագրվել է 52 քմ սպասարկման մակերեսի համար չներկայացված ելակետային տվյալների խախտում: Ստուգմամբ պարզվել է, որ ընկերությանը պատկանող հանրային սննդի օբյեկտը ժամը 24::00-ից հետո գործունեություն չի իրականացնում, այդ պատճառով ընկերությունը հարկային տեսչություն ներկայացրած ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների մասին հայտարարությունում լրացուցիչ 2.0 ուղղիչ գործակից չի կիրառել:
8. Հայտնում եմ Ձեզ, որ <<Հեյբերդ>> ՄՊԸ /ՀՎՀՀ 02246983/ Սպանդարյանի ՀՏ է տեղափոխվել 24.12.2010թ Շենգավիթի ՀՏ-ից, որից հետո 25.05.2011թ ընկերությունը դադարեցրել է գործունեությունը և ՀԴՄ հանել հաշվառումից: Մեզ առկա տվյալներով ընկերությունը գիշերային գործունեություն չի իրականացրել:
9. <<Կոլիբրի Գ.Ա.Գ>> ՄՊԸ /ՀՎՀՀ 02505176/ գործունեություն է իրականացնում Մաշտոցի 27 հասցեում և ներկայացրել 50 քառ.մ սպասարկվող տարածքի ելակետային տվյալներ և մեր դիտարկումների արդյունքում պարզվել է, որ ընկերությունը գիշերային գործունեություն չի իրականացնում:
10. Միաժամանակ տեղեկացվում է, որ Կենտրոնի հարկային տեսչության կողմից այսուհետև ևս իրականացվում է ընթացիկ հսկողական աշխատանքներ /այդ թվում արտաքին դիտարկում/ նշված տնտեսվարող սուբյեկտների մոտ ժամը 24:00-իս հետո գործունեության ծավալման արձանագրման նպատակով /միաժամանակ որպես <<բար>> հանդես գալու պարագայում/:
11. - <<Ավելացված արժեքի հարկի մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի <<Ե>> կետի պահանջի խախտմամբ ԱԱՀ-ի հարկման դաշտում աշխատելուց խուսափելու տնտեսվարող սուբյեկտների վերաբերյալ հայտնվում է, որ որ նախկին Մյասնիկյանի հարկային տեսչությունը նման տեղեկատվություն չի ունեցել, սակայն 2011թ ընթացքում նույն խախտման հիմքով իրականացվել է 8 ԲՄ և արձանագրվել է 58280.3 հազ.դրամ հայտնաբերում:

12. Ցանկում ընդգրկված /15+23/ տնտեսվարող սուբյեկտներին ուղարկվել է գրություններ, իսկ « Էլիտ Լայֆ» ՍՊԸ և «Ստարլեթ» ՍՊԸ վերաբերյալ տվյալները ուղարկվել են համապատասխանաբար Էրեբունու և Արաբկիրի հարկային տեսչություններ, քանի որ ընկերությունները նախագահի հրամանով տեղափոխվել են:
13. «<Նյու Վենդ>>, «<Սանացիա>>, «<Հախման>>, «<Թրավել Դոկ>>, «<Իրավունքի պաշտպան>>, «<Էմպո Ջին>>, «<Սպորտ Հովիկ>>, «<Նեյման և որդի>>, «<Մելտեքս>>, «<Գիլի>>, «<Վահագն 1>> ընկերությունների կողմից ներկայացվել է ճշտված հաշվարկներ:
14. «<Մուղնե>> և «<Կարեն Ասրյան>> ընկերություններում նախատեսված է իրականացնել ԲՄ, քանի որ ընդգրկված են 2012թ ստուգման ծրագրում: ԲՄ ստուգումներ չի իրականացվել, կատարվել է նախնական հաշվարկներ և նյութերը ուղարկվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչություն:
15. «<Կարախանյան և ընկերներ>> և «<Լիսամ>> ընկերությունների կողմից ներկայացվել է համապատասխան հիմնադիր փաստաթղթեր, որ 2006թ կատարվել է հիմնադիրների փոփոխություն:
16. «<Բուրց ընդ Գրանտ>>, «<Ֆրիդմ Էյր>>, «<Ատելյե-ԱՊրոֆեշնլ>>, «<Վանարտ Դիզայն>>, «<Բիբիս Լուք>>, «<Պլաստքարտ>>, «<Սպիկա>>, «<Սահակ Պարթև Պապյան>>, «<4+1>>, «<Գալիտո>>, «<Դրիմ գրուպ>>, «<Անի դեկորասիոն>>, «<Արտաս>>, «<Գասպրինտ>>, «<Կեռի Թրեյդ>>, «<Մարզջան դենտ>>, «<Դոռադո>>, «<Գաբրիլ>>, «<Էյջ Բի Էյ>>, «<Վիպ Մեսնիջեր>>, «<Նորմա Սերվիս>> ընկերություններում իրականացվել է հարկային պարտավորությունների նախնական հաշվարկ և նյութերը ուղարկվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչություն:
17. «<Թռիչք>> ՍՊԸ կողմից 2010թ համար ներկայացվել էր ԱԱՀ-ի հաշվարկներ:
18. «<Իմաստասեր մասնավոր վարժարան>> ՍՊԸ Ավան թաղամասի Աճառյան 38 հասցեում իրականացնում է վարժարանի մասնաշենքի շինարարություն, որի հետ կապված իրականացնում է մատակարարների հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարների հաշվանցում: Համաձայն «<ԱԱՀ-ի մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ պարբերության, եթե հետագայում պարզվի գործունեության նպատակը, ապա հաշվետու ժամանակաշրջանում իրականացված գործարքներին ուղղակիորեն վերաբերող ձեռքբերումների մասով նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում հաշվանցված ԱԱՀ-ի գումարները ենթակա են վերաձևակերպման և պետք է միացվեն ապրանքների կամ ծառայությունների ձեռք բերման գնին, կամ արտադրության և շրջանառության ծախքերին: Ընկերությունը ներառված էր 2012թ ԲՄ ծրագրում, սակայն հաշվի առնելով վերը շարադրվածը նպատակահարմար չի գտնվել 2012թ. իրականացնել ԲՄ և շինարարական աշխատաքների ավարտից հետո ինքնուրույնաբար դեբետի պակասեցում չտալու դեպքում տեսչությունը կանդրադառնա նշված խնդրին:

19. <<Նոյան-Տապան>> ՍՊԸ –ից 5168100դրամ գումար բռնագանձելու պահանջի մասին 12.05.2010թ հայց է ներկայացվել ՀՀ վարչական դատարան, որից հետո 30.11.2011թ <Նոյան Տապան> ՍՊԸ –ից 24218.500դրամ բռնագանձելու պահանջով կրկին հայց է ներկայացվել ՀՀ վարչական դատարան:
20. <<Ղարդ>> ՍՊԸ 551184500դրամ գումար բռնագանձելու պահանջով հայց է ներկայացվել ՀՀ վարչական դատարան: 05.05.2011թ թիվ ՎԴ/3263/05/10 վճռով Սյասնիկյանի ՀՏ հայցը բավարարվել է և կատարողական թերթը ներկայացվել է ԴԱՀԿ ծառայություն: 07.09.2011թ ԴԱՀԿ ծառայությունը ղեկավարվելով <<Սնանկության մասին>> ՀՀ օր-ի 6-րդ հոդվածի 2-րդ մասով և <<Դատական ակտերի հարկադիր կատարման մասին>> ՀՀ օր-ի 28-րդ հոդվածով և 37-րդ հոդվածի 8-րդ կետով որոշում է կայացրել կատարողական վարույթը կասեցնելու մասին և առաջարկել պահանջատիրոջը կամ պարտապանին 60-օրյա ժամկետում սնանկության հայց ներկայացնել դատարան, որից հետո Սյասնիկյանի ՀՏ 07.10.2011թ ընկերությանը սնանկ ճանաչելու պահանջով հայց է ներկայացրել դատարան:
21. <<Հովհանգար>> ՍՊԸ- ից 718240.850դրամ գումար բռնագանձելու պահանջով հայց է ներկայացվել ՀՀ վարչական դատարան: 01.11.2011թ թիվ ՎԴ/3094/05/10 վճռով Սյասնիկյանի ՀՏ հայցը բավարարվել է և կատարողական թերթը ներկայացվել է ԴԱՀԿ ծառայություն:
22. <<Գազգալ>> ՍՊԸ 403.102.300դրամ գումար բռնագանձելու վճարման կարգադրություն արձակելու պահանջով հայց է ներկայացվել ՀՀ վարչական դատարան: 02.07.2010թ թիվ ՎԴ/25907/03/10 վճռով Սյասնիկյանի ՀՏ հայցը բավարարվել է և կատարողական թերթը ներկայացվել է ԴԱՀԿ ծառայություն: 27.04.2011թ ԴԱՀԿ ծառայությունը ղեկավարվելով <<Սնանկության մասին>> ՀՀ օր-ի 6-րդ հոդվածի 2-րդ մասով և <<Դատական ակտերի հարկադիր կատարման մասին>> ՀՀ օր-ի 28-րդ հոդվածով և 37-րդ հոդվածի 8-րդ կետով որոշում է կայացրել կատարողական վարույթը կասեցնելու մասին և առաջարկել պահանջատիրոջը կամ պարտապանին 60-օրյա ժամկետում սնանկության հայց ներկայացնել դատարան, որից հետո Սյասնիկյանի ՀՏ 27.05.2011թ ընկերությանը սնանկ ճանաչելու պահանջով հայց է ներկայացրել դատարան:
23. <<Ֆրուտիմպեքս>> և <<Արֆին վարկային միություն>> ընկերություններում արձանագրությունում նշված հարցի վերաբերյալ կազմվել են կամերալ ուսումնասիրության արձանագրություններ:
24. <<Ֆրուտիմպեքս>> ընկերության կողմից 12.12.2011թ ներկայացվել բացատրություն, որ իրենց կողմից սեպտեմբերի 22-ին հարկային հաշվում լրացված 7.6 մլն. գնի փոխարեն սխալմամբ լրացված 35.0 մլն.դրամ գումարը գնորդի կողմից չի ընդունվել: 22.09.2011թ սխալ կազմված թիվ Ա 0304477266 հարկային հաշիվը համարվել է չեղյալ: Ընկերության կողմից կատարվել է ԱԱՀ-ի հաշվարկի ճշտում:

25. <<Արֆին վարկային միություն>> ՍՊԸ-ում իրականացված կամերալ արձանագրությանը ընկերությունը պատասխանել է, որ 11.07.2011թ Ա 1450814390 հարկային հաշվի էլեկտրոնային տարբերակով լրացման ժամանակ տեղի է ունեցել վրիպում և հետագայում այդ հաշիվը համարվել է չեղյալ: Ընկերության կողմից կատարվել է ԱԱՀ-ի հաշվարկի ճշտում:
26. <<Քիդս քլաբ>> ՍՊԸ-ում ուսումնասիրության /չափագրում/ հանձնարարագիրը փակվել է մեկ օրից գեկուցագրով, քանի որ տնօրենը բացակայել է ՀՀ տարածքից և ըստ բանավոր հայտարարության ընկերությունում տնօրենին փոխարինող անձ չի եղել գրանցված:
27. <<Ունիկում Արմենիա>> ՍՊԸ /ՀՎՀՀ 02704947/ ներմուծել է խաղային ապարատներ և լուսային ցուցատախտակներ: Պարզվել է, որ ընկերությունը զբաղվում է բացառապես վարձակալությամբ: Այդ իսկ պատճառով չափագրումը կատարվել է մեկ օր:
28. <<Մոդեռն Պլաստ>> ՍՊԸ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 16.02.2012թ թիվ 1206007 հանձնարարագրի համաձայն ընկերությունում իրականացվել է չափագրման ուսումնասիրություն, որի արդյունքում պարզվել է, որ ընկերության հսկիչ-դրամարկղային մեքենայի տեղադրման վայրում ընկերությունն իրականացնում է այնպիսի գործունեություն, որի համար կանխիկ դրամով իրականացվող դրամական հաշվարկների դեպքերում հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումն օրենքով պարտադիր չէ:
29. <<Շին էքսիմ>> ՍՊԸ կողմից 2010թ ապրիլ ամսվա համար ԱԱՀ-ի հաշվարկի 11-րդ կետով՝ ԱԱՀ-ի 20% դրույքաչափով հարկվող շրջանառություն է ցույց տրվել 25523.0 հազ.դրամ, իսկ <<Դուրս գրված /գնորդներին տրված/ և /կամ/ մատակարարներից ստացված հարկային հաշիվների վերաբերյալ>> տեղեկանքում շրջանառությունը կազմում է 5056.4 հազ.դրամ: Կարելի է եզրակացնել, որ մնացած հարկային հաշիվներում ներառված հարկվող շրջանառության արժեքը չի գերազանցել ՀՀ կառավարության սահմանված չափը: Ինչպես նաև, քանի որ տեղեկանքով ցույց տրված շրջանառությունը ավելի փոքր է, քան ԱԱՀ-ի հաշվարկով ցույց տրված շրջանառությունը, հետևաբար հարկվող լրացուցիչ հարկային պարտավորություն չի առաջանում: Այստեղ խնդիր կարող էր լինել, եթե տեղեկանքի կրեդիտային շրջանառությունը մեծ լիներ, քան ԱԱՀ-ի հաշվարկի կրեդիտային շրջանառությունը, իսկ այս դեպքում հակառակն է: Հնարավոր է նաև, որ ՀԴՄ-ի շրջանառությունը 16.67% ցույց է տրված 20% շրջանառության տողում հետհաշվարկի սկզբունքով: Համենայն դեպս ըստ տեղեկանքի պակաս շրջանառություն չի հաշվարկված:
30. <<Էդմանս>>, <<Լոռի>>, <<Անաիդա և Քրիստինա>> ընկերություններում հացի արտադրության և չափագրման արդյունքներում լրացվել է հատը, քանակը, գումարը, սակայն ստուգմամբ արձանագրվել է, որ պետք է գրանցվեր քաշը, գումարը, որը չափագրման արդյունքում որևէ տարբերություն չի առաջացնում:

31. Ակտում նշված վնասով աշխատող կազմակերպությունների մոտ կամերալ ուսումնասիրություն չիրականացնելու հետ կապված պարզաբանում ենք, որ նշված 9 կազմակերպությունների մոտ իրականացվել է բյուջեի փոխհարաբերությունների ճշտության ստուգում: Կցվում է ցանկը:
32. 2012թ ընթացքում 170 /3/ հոդվածի պահանջներով վարչական պատասխանատվության է ենթարկվել 636 տնտեսվարող սուբյեկտ: